

կընդունեք և անօնց մէջ անանինեք կա-
մին՝ որ չըեանեքուն անընդունելի եին:

Առենք այս տեղս ընդհանուր եկեղեցին
բաղկացնող իւրաքանչիւր մասնաւոր ե-
կեղեցեաց վրայ մի ըստ միոջէ ըսելու կամք
չունիմք. յատկապէս մեր Առաքելական
Ա. Եկեղեցւոյ վրայ պիտի խօսիմք, և ո-
րովհետեւ Ա. Կուսաւորիչ Հայրն մեր
քըստոնէական հաւատոյ վարժութիւնը
Յունաց մէջ առաւ և անով մեր նախ-
նիքը վարժեց, մեր զրիկիքներէն կիմացուի
չորրորդ դարուն մէջ և անկեց առաջ և
ետքը՝ Յունաց եկեղեցւոյն հաւատքը
Իսկ անոր վրայ՝ որ կըսեն բողոքականք՝
թէ Յոյները Երկրորդա-
կանոն գըքերը Աստուածաշունչի կարգը
չեն ընդունիր, որովհետեւ ասիկայ ներ-
կայ ժամանակիս Յունական եկեղեցւոյն
վերաբերեալ բան մ' է, Հայաստանեացց
Ա. Եկեղեցւոյ հայրապետաց և վարդա-
պետաց վկայութիւնը տեսնելնէս ետքը՝
ասոնց վրայ ար կըսոսիմք:

$$\left(1, j^{\frac{1}{2}} \cdots \frac{r}{k} \cdots j^{\frac{1}{2}} \right)$$

g., s., u., skelosyll.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԿԱԴՐԱՑԻՒԹՅՈՒՆ

ԳՐԱՎԵՐԱՊԵՏ ՏԵՂԱՔԻ

Խոկ անդ ի Ա. Գրիգոր, որ յԵռապաշտիւն, կաթուղիկոսարան շինելու կամ Մեծ Հաստան պարսպիլու համար պատմիչք մէկմէկէ առնլով, կվիայեն՝ որ “Երսէս Գրգ. Ը ինողն ասացեալ Կաթուղիկոս, զսուրբ Գրիգոր յանուն Երկնաւոր զըւարթնոց կառուցանելն եաթը, շուրջանակի պարսպեց զայն, և մենաստանի մէջ կանգնեց ոչ միայն իւր համար յարկս բնակութեան կոփածոյ քարով, այլ և կարգեալ կացուցաներ ինմա, կըսէ պատմաբանն, ամբոխութիւնս երդումարդ գաց ըստ պայմանի քաղաքականաց . . . ըստ որում Դմբայ և Երտաշատ քաղաքաց ձանապարհը ընդ այն կանցաներ:

Աւստի Քասաղ գետէն ջուր բերելով
մինչև անդ, զրիթէ չըրս ժամ հեռաւու-
րութենէ, Ըստապարի բոլոր շքակայ ա-
ւազուտ դաշտավայրը հերկելու դիւրա-
ցրուց այգի և բուրաստան տնկեց. որոց
քարշշար հիմունքը գեռ ևս կնշմարուին
տեղ տեղ գետնի հաւասարութեան վրայ
Ըստապարի հիւսիսակողմը մերձ ի Քաւ-
թառաձոր տեղին:

— Վասաղ գետ, ինչպէս յայտնի է
Վաղարշապատայ պատմութենէն եք. 39.
Կիդ գտւառէն կոկզմնաւորի, Արայի լե-
րին արևմտեան կողմէն անցանելով, կը
մանի Արագածոտն գաւառ Ազգմուսա-
վանքի խորաձորը, անտի զառ ի վայր

իջնելով մինչև յԵշտարակ, Օշական գիւղի ներքեւ կթափի Երարատեան դաշտ, ուստի սուրբ Գրիգորին Եռապարի՝ գետի արեւելան հարաւային կողմը կանկանի համարեա երկու ժամ հեռաւորութեամբ։

Հին ժամանակից հետեւ, Քասաղ գետէն երկու Եռու հանած են դեպ Երարատեան դաշտը, Երայի լերին յառաջը արածուած ի հարաւայ ընդարձակ լեռնադաշի և առապարի միջով։

Եռաջնը սկսուած է Նիդ դաւառի Եստուածընկալ զիւղի առջեւն, որ գետի արեւելան եղերքէն անցնելով, յիշեալ լերին հանգեպ յարկմտից կերանէ ընդարձակ լեռնադաշտը, և այս տեղ կը կորուսանէ իւր հետքը, որոյ արևելից կը տարածուի Եղուարդայ հանդը, և հարաւայ կողմից ի իոնարհ ու զզակի սուրբ Գրիգորի Եռապարը կերեմ՝ գրեթէ երեք ժամու հեռաւորութեամբ։

Երկորդ առուն հանած են Եշտարակ զիւղի ներքեւ՝ որ յԵրագածուն, ձորի մէջ, որ գետի արեւելան եղերքէն բարձր քարափի տակէն անցնելով փոքր տեղ դուրս կգայ Եռապար դաշտի երեսը, Օշականայ Գետառ ասացեալ տեղէն փոքր ինչ վեր, և վերը յիշուած լեռնադաշտէն ի խոնարհ զառ ի վայր առապարները կոռոգէն մինչև սուրբ Գրիգորի ասացեալ այդետեղերը Քառաթառաձորի յառաջ. զոր վերը յիշեցինք, ի վլուխ Վաղարշապատայ այգեաց. որոց մերձ է և Սուրբն Գրիգոր յԵռապարին, ուստի հաւանական է որ այս առուն հանած լինի Ծինող Ա. Հայրապեան Կերսէս և բոլոր աւազանիս վայրս Ա. Գրիգորի Շիգործ արկեալ։

Ինախնեաց անտի այս Առուն ևս աւերուած էր մինչև մեր ժամանակ. և կը կոչուի Տկաշանի առու՝ այս ինքն քարտի տակից հանած։

Սուրբ Եղմիածնի Սինողի անդամք աեսնելով Եթոսոյս Օշական զիւղի նիւղութիւնը վարելահողի սակաւութեան մասին, գիւղացւոց մշակութեամբ՝ Եթոսոյ ծախսով և եռանդուն ջանիւք Գրիգոր վարդապետի (այժմ Խպս.) Մուշեղեանց հանեցին այս Տկաշանի առուն, և նորատակն եղած բոլոր անջրդի և քարքարուտ առապարները բաժանելով Օշականայ բընակչաց վրայ, առիթ եղեն այն ընդարձակ ամայի և անջրդի դաշտերը սոսոգելու և ցանելու (յամին 1865 և 1866), ի մեծ օգուտ Եթոսոյս, որոյ սեպհականութիւն է, և ի բարեկեցութիւն Օշականու բնակչաց։

Վերջ տալով ասանոր Վաղարշապատաց հինգ եկեղեցեաց ստորագրութեանը, կխօստանամք, որ եթէ միջոցները ներեն և ժամանակ ունենամ, ի յառաջակայ գտրնան պատրաստել նաև Երագածուն դաւառի և Երշարունեաց մէջն եղած նախնական Քաղաքաց և զաստակերաբից. թէ Հայկազանց ժամանակից և թէ Երշակունեաց՝ ստորագրութիւնները աշխարհագրական տեղեկութեամբ, որք Երարատեան դաշտի մէջ կը համարուին Երասխայ հիւսիսային և հարաւային կողմերը, որոնք են Երմանիք յԵրագածուն. Փառախոտ, Ցողակերտ, Երուանդաշատ և Երուանդակերտ նաև Երշակաւան յԵրշարունիս, կամ յԵրասխաձոր. Դվին և Երտաշատ՝ ի դաշտն Գլխայ, և այն. որոց պատմական տեղեկութիւնները առ ձեռն ունինք, միայն

նոցա զիլքը տեսնելու և տեղադրութիւն
անելու կատականի մեջ միջոց։

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՐՄԵ,

ԵՐԱ ԳԱԼԻԿԱՅԻ ԵՒ ԳՈՆԻԼԻ ԿՈԹՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(Անգլական բառեր հայոց բարբառ)

Ա կերն (Երարատայ անցեալ Բ. ըդ
թուում) սասցի թէ, եթէ Պուկասը չեր
մեր երեելի Առթուզիկոսներէն մինը, չեր
գոնէ և վերջնեն, և էս ապացուցանելոց
համար փոքր ինչ շեղուինք մեր նպատա-
կէն և հրաւիրենք մեր ընթերցողները
դարձնել իւրիանց ուշադրութիւնն էն
ժամանակուան դրացի իշխողների քաղա-
քական փոփոխութիւնների վերայ: Ու ինչ
ժամանակ քանի մի դարուց հետէ Պարս-
կաստունը չեր եղած էնպէս երերուած և
տատանուած վիճակի մէջ՝ ինչպէս եր
Պուկասի ժամանակնու Իւրաքանչեւը
Պարսկաստանի կուսակալ կամ խան գուն
կզործէր գրաւել միահեծան թագաւորու-
թիւնը, ուստի և միմեանց վերայ յարձա-
կուելէն ոտնակոխ կլինէր բոլոր նրանց աշ-
խարհն և աւելի ևս Հայաստանի կողմերն
Պուկասն ստիպեալ եր իւրաքանչեւը
յարձակողի երեսը մեծամեծ ընծաներով
հաշեցնել: Իվերջոյ երբ կլսէ ներքինի Ա-
ղա Ամամատ խանի հզօրանալը միւսների
վերայ, և թէ նա մոագիր է բազմաթիւ
զօրքով չուել զալ Հայաստանի կողմերն,
1794 տին քսան թեռն Պայազիտ՝ և 21
մնտուկ թիվլիս կառաքէ, պարունակուած
աթուային թանկազին և ականակուա-
թագերէ, վականներէ, գաւազաններէ, և

կեզեցական սպասներէ, անօթներէ և
զգեստներէ, կարծելով թէ էնքաղաքներն
անքոյթ կմնան և անվտանգ։ Տարարախ-
տութեամբ՝ 1795 ամի 11 սեպտեմբերի
թժիֆլիս կաւերուի Եզա Մամատ խանէ,
այն տեղի Պետրոս Խաղիսկուպոս առաջնորդը
կգերուի և կյափշտակուին աւարառուներէ
21 մնառուկ աթոռային կայքը։

Դուկաս մեծամեծ ընծանելով ինքը
կերթայ ներքինոյ եղբօր որդի Առւշյան
խոսն Արդարի, և զՅովհաննէս Եպիսկոպո-
սոս նոյնպէս ընծանելով կառաքէ Շահի
բանակը, նոցա երեսը հաշտեցնելոյ համար։
Մի և նոյն ժամանակը քանի քանի չաց
և Վրացի Վրաստանին բերած գերիներ
կաղատէ նա աթոռային դրամով ի վերայ
այսր ամենայնի՝ Եախիջեանի, Երեանի և
սուրբ Խջմիածնի կողմերն անզգալի վնաս-
ներ կրելով՝ կաղատուին խաչեմութեամբ
Դուկասի, թէե ինքն բանակի մէջին սաս-
տիկ տառապանքներ կը կրէ։ Եյնուշեաւ-
սոյ ինքն 1796 ամին շրջաբերականներ կա-
ռաքէ Տաճկոստանի Ոսուսաստանի Պարս-
կաստանի և Հնդկաստանի ազգայնոց վի-
րայ, երկար երկար նկարագրելով իւր վրշ-
տակրութիւնները, աթոռային և ազգային
տիսուր վիճակը, ամենուրեքէ մեծամեծ
անակնկալ ծախքերը, գանձարանի թափու-
րանալն, և կը խնդրէ օգնել Աթոռին ար-
դիւնաւոր նուելիներով։ Ամենայն ուրեք
նրա շրջաբերականները համակրութեամբ
կընդունուին և մեծամեծ գումարներ կա-
ռաքուին ամենուրեքէ շարունակ յԽջմիա-
ծին ցՊուկասի իննաց վիրջին օրերը, Էս-
պէս որ՝ նրա մահուան ժամանակը գան-
ձարանի մէջը հարիւր հասպար նուման
Պարսից պատրաստի դրամը կը տնուի, զոր